ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 8, 1956 Общественные науки

Հ. Նալբանդյան

ԱՐԱԲԱՑԻ ՈՍՏԻԿԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ[1]

(7-րդ դարի վերջից մինչև Աշոտ Ա-ի գահակալությունը)

Արաբական խալիֆաթի տիրապետության ժամանակաշրջանում արաբների իշխանությունը Հայաստանում ներկայացված էր հանձին արաբ կառավարչի՝ ոստիկանի, որի պաշտոնն էր.

1. հսկել երկրի ներքին կացության, Հայաստանի իշխանի և նախարարների վրա.

2. հսկել տուրքերի կանոնավոր գանձման վրա.

3. զսպել ժողովրդական ապստամբական շարժումները.

4. հետևել սահմանագլխի պաշտպանությանը, հյուսիսից՝ խազարների և արևմուտքից՝ բյուզանդացիների դեմ, և կամ մեկնակետ ունենալով Արմինիան, արշավանքներ կատարել դեպի այդ երկրները։ Կառավարիչը, ուրեմն փաստորեն Արմինիայում գտնվող արաբական բանակների հրամանատարն էր.

5. ուղղակի կերպով կառավարել Հայաստանի հողի վրա հաստատված մահմեդական գաղութները։

Ամբողջ խալիֆաթի սահմաններում Օմայանների ժամանակաշրջանում եղել են հինգ փոխարքայություններ, Աբբասյանների ժամանակ մի քիչ ավելի։ Ընդհանրապես Արմինիան (Հայաստան, Վրաստան, Աղվանք), Ատրպատականը, արևելյան Փոքր Ասիան, հյուսիսային Միջագետքը միասին վերցրած կազմում էին մի փոխարքայություն։ Կառավարիչը կոչվում էր «ամիր» կամ «վալի»։ Յուրաքանչյուր նահանգի մեջ նա ուներ իր «Ամիր» կոչված փոխանորդը։ Կառավարիչներին հայ պատմիչները կոչել են զանազան անուններով՝ «հրամանատար դատաւորութեան և հարկապահանջութեան», «վերակացու», «մարզպան», իսկ Հովհաննես կաթողիկոսն ու Ասողիկը կոչել են «ոստիկան», և այս անունն է գործածական դարձել մեզ մոտ։

Հայաստանի ոստիկանների ցուցակը կազմելու մի քանի փորձեր են կատարվել, որոնցից կարևորն են Մ. Ղազարյանի[2], Ժ. Լոռանի[3] և Ռ. Ֆասմերի[4] փորձերը։ Այդ հեղինակների կազմած ցուցակները չենք կարող լիակատար համարել, որովհետև նրանք չեն օգտվել բոլոր աղբյուրներից։ Ֆասմերը, որ բացի պատմական աղբյուրներից, օգտագործել է նաև դրամագիտական տվյալները, տալիս է թերի ցանկ՝ սկսելով 750 թ. և չօգտագործելով մի քանի աղբյուրներ։

Ներկա ցուցակը կազմելիս, որը պարունակում է և՛ կառավարիչների և

---

[1] *Սույն հոդվածի վրա հեղինակը որոշ աշխատանք ուներ կատարելու, որ նա չհասցրեց անել հիվանդության և մահվան պատճառով։ Սակայն Հայաստանի՝ արաբական ոստիկանների ներկա ցանկը համարյա ամբողջական է, գիտական կարևորություն է ներկայացնում և կարող է ծառայել իբրև վստահելի տեղեկատու նյութ։ (Ծան. խմբ.)։*

[2] *M. Ghazarian*, Armenien unter der arabischen Herrschaft bis zu Erstehung des Bagratiden Reiches, Marburg, 1903.

[3] *J. Laurent*, L'Armenie entre Byzance et l'Islam, depuis la conquete arabe jusqu'en 886, Paris, 1919.

[4] Ռ. Ֆասմեր, *Ժամանակագրություն Հայաստանի ոստիկաններու առաջին արաբյանց օրով, թարգմ. Վ. Հ. Ինդիլիդյան, Վիեննա, 1933։*

փոխարքաների անունները, օգտագործել ենք հայկական, արաբական և բյուզանդական պատմական աղբյուրները։ Օգտագործել ենք նաև Ֆասմերի գործը դրամագիտական տվյալների համար։

Արաբական աղբյուրներից Բելազորին, Յակուբին, իբն Միսքավայհը և Թարարին չունենալով ձեռքի տակ, օգտվել ենք Խալաթյանի թարգմանությունից[1], իսկ մյուս արաբական աղբյուրները՝ իբն ալ-Աթիրը, իբն Խալդունը, Տաղրիբերդին, իբն Խալլիքանը ուղղակի բնագրից ենք օգտվել։

Հայաստանը արաբների կողմից առաջին անգամ նվաճվելուց (640 թ.) մինչև կես դար, փոխն ի փոխ ենթարկվեց բյուզանդացիների և արաբների ավերիչ ասպատակություններին և վերջնականապես ընկավ խալիֆաթի գերիշխանության տակ Աբդլմալիք (685 թ.—705 թ.) խալիֆի ժամանակ։

Սրա իշխանության սկզբի տարիներին խալիֆայական սահմաններում ծագեցին մի շարք խռովություններ։ Ամենից ավելի ծավալուն եղավ Աբդալլահ իբն-Զուբայրի ապստամբությունը։ Զուբայրը 683 թվին, Եզիդի մահից հետո, իրեն խալիֆ հռչակեց Մեքքայում և մինչև 693 թիվը սպառնաց Օմայանների գահին։ Հայերն էլ՝ օգտվելով այդ Զուբայրի շարժումից, ինչպես ասում է Բելազորին, ապստամբեցին։ Աբդլմալիքը մեծ դժվարությամբ զսպեց աղ-Զուբայրի ապստամբությունը։ Նույն խալիֆը հաջող կռիվներ մղեց նաև Բյուզանդիայի դեմ, որի հետևանքով բյուզանդացիները հրաժարվեցին Հայաստանը վերագրավելու իրենց փորձերից։

Ներքին և արտաքին վտանգները հեռացնելուց և իր գահն ապահովելուց հետո Աբդլմալիքը մի շարք վարչական ու ֆինանսական միջոցառումների դիմեց, նրա ժամանակ խալիֆաթի պետական ներքին ապարատը ստացավ որոշ ձև։

Արմինիայի ոստիկանների շարքը սկսվում է, ուրեմն, այս խալիֆի օրից։ Նա առաջին անգամ ոստիկան նշանակեց իր եղբորը.

1. **Մուհամմադ իբն Մրուանին** (693—709 թ.)։ Նրա նշանակման մասին պատմական աղբյուրները տալիս են տարբեր թվականներ։ Թեոփանեսը (Chronographia, էջ 188) տալիս է հունական 6184 թ., որը համապատասխանում է մ. թ. 692-ին։ Կաղանկատվացին (էջ 366) տալիս է հայոց 145 թ. (մ. թ. 696)։ Բայց սա նրա երկրորդ անգամ գալու թվականն է։ Իբն ալ-Աթիրը (Դ 176), իբն Խալդունը (Գ 70), Տաղրիբերդին (Ա 120) տալիս են Հիջրի 73 թվականը (մ. թ. 692—693)։ Բելազորին (էջ 54) թվական չի տալիս, ասում է միայն, թե Աբդլմալիքը ուղարկեց նրան հայերի դեմ։ Բայց որովհետև նա էլ Մուհամմադի ոստիկան նշանակվելը կապում է աղ-Զուբայրի ապստամբության հետ, նրա տված տեղեկությունը համընկնում է 693 թ.։ Յակուբին (էջ 105) խոսում է Մուհամմադի կառավարիչ նշանակվելու մասին, բայց չի հիշատակում թվականը։ Ըստ Ղևոնդի (էջ 40) Մուհամմադը եկավ Աբդլմալիքի 16-րդ տարին, այսինքն 701 թ., հետևաբար նրա առաջին գալու մասին չէ խոսքը, այլ երկրորդ գալու, որն իրոք այդ թվին է։ Վարդանն ասում է, թե Մահմեդին ուղարկեց Մրուանը (պետք է իմանալ Մրուան 1-ինի որդի Աբդլմալիքը), բայց նա էլ չի հիշում թվականը։

Բոլոր տվյալներից հետևում է, որ Մուհամմադը նշանակվեց ոստիկան 693 թ.։

---

[1] Ռ. Խալաթյանց. Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, Վիեննա, 1919։

Թեև Մահմեդի (Մուհամմադի) ոստիկան նշանակվելու թվականը ըստ պատմիչների վկայության 693 թ. է, բայց և այնպես մինչև 698 թ. Հայաստանի հողի վրա բյուգանդական բանակները արշավանքներ էին կատարում։ Հուստինիանոս Բ-ի ասպատակություններից հետո, ըստ Ղևոնդի (էջ 39), Տիբերիոս Գ Ափսիմերեսը (698—705) արշավեց Վարազտիրոցի որդի Սմբատ Բագրատունու դեմ և տեղի ունեցավ Պայիկի կռիվը, որից հետո բյուղանդացիները վերջնականապես հեռացան Հայաստանից և երկիրը ենթարկվեց արաբների գերիշխանությանը։ Այսպիսով ոստիկան նշանակվելով դեռևս 693 թ. Մուհամմադը իր բանակով Հայաստան մտավ 698 թ.։

Մուհամմադի ոստիկանության տևողությունը ճշտվում է համաձայն արաբական աղբյուրների։ Իբն ալ-Աթիրը (Դ 206), իբն Խալդունը (Գ 70), Տաղրիբերդին (Ա 222) որոշակի կերպով ասում են, թե Մուհամմադը հեռացվեց Հիջրի 91 թ. (մ. թ. 709—710), որով սխալ է Յակուբին (էջ 105), երբ ասում է, թե Մուհամմադը մնաց Հայաստանում մինչև իր մահը։ Նա մահացավ Հիջրի 101 թ (մ. թ. 720)։

Մուհամմադ իբն Մրոանը հաճախ էր մասնակցում խալիֆայական բանակների արշավանքներին Բյուզանդիայի դեմ և ամեն անգամ Հայաստանից հեռանալիս նշանակում էր մի փոխ-կառավարիչ։

2. Աբդալլահ— սա հիշատակված է միայն հայ պատմիչների մոտ, և որին, թվում է, թե Մուհամմադը նշանակեց իբրև փոխանորդ 700 թ., երբ հեռացավ Հայաստանից։ Սրա մասին է ակնարկում Հովհաննես կաթողիկոսը (էջ 120) ասելով «այր ժանտ ժպիրհ, ապերասան և յաւէտ չարաբարոյ», նույնը նաև Ասողիկը (էջ 101)։

Աբդալլահն էր, որ Սահակ Զորափորեցի կաթողիկոսին և Սմբատ Բագրատունուն աքսորեց Դամասկոս։

3. Աբու Շայխ իբն Աբդալլահ (701—703)։

Հիջրի 82 թ. (մ. թ. 701) Մուհամմադը արշավեց Հայաստան երկրորդ անգամ և հեռանալիս փոխ-կառավարիչ նշանակեց Աբու-Շայխին, որին հայերը սպանեցին հաջորդ տարին (իբն ալ-Աթիր Դ 227, իբն Խալդուն Գ 70)։

4. Աբդալլահ երկրորդ անգամ (703—704)։

Սրա անունը հիշատակում են հայ պատմիչները Վարդանակերտի կռվի առթիվ։ Այս Աբդալլահը շատ հավանաբար Աբդմալիքի որդին էր, որը Մուհամմադի ընկերակցությամբ Իրաքի կողմերը գնաց ապստամբների դեմ կռվելու։ Նաև 84 թ. գրավեց Մսիսը։ Սակայն իբն ալ-Աթիրի ասելով 85—86 թ. նա Եգիպտոսի կառավարիչ էր։

Սրա բռնությունների դեմ հայերն ապստամբեցին և Վարդանակերտում ջարդեցին արաբական զորքերին։ Թվում է, ուրեմն, որ Վարդանակերտի կռիվը տեղի ունեցած պիտի լինի 703 թ. վերջում՝ ձմռանը։ Սամվել Անեցին (էջ 95) դնում է ՁԲ (մ.թ. 702, հասկացիր 704)։ Նույն դեպքից հետո Մուհամմադն արշավեց երրորդ անգամ՝ զսպելու համար հայերի շարժումը, Հիջրի 84 թ. (703-ի վերջից—704 թ՝ վերջ), ինչպես վկայում են իբն ալ-Աթիրը (Դ 284), Վարդանը (էջ 71)[1]։ Նա մեկնելիս փոխ-կառավարիչ նշանակեց Օքրային։

---

[1] Այստեղ պետք է դնել Սահակ Զորափորեցի կաթողիկոսի մահվան (703 թ.) դեպքը ու Խառանի հանդիպումը։ Ղևոնդը (էջ 51) և Վարդանը (էջ 71—72) Մահմեդին են հիշում, իսկ Հովհաննես կաթողիկոսը (էջ 132) և Ասողիկը (էջ 102) Օքրային։

5. Օրման իբն-Վալիդ իբն Օֆբա իբն Աբի-Մուայրին (706)։

Սրա մասին խոսում են Բելազորին (էջ 54), Հովհաննես կաթողիկոսը (էջ 121). «Ոքբայ ոմն զօրապետ» ասելով՝ Վանանդում Կամսարականներից և Վանանդեցիներից նրա կրած պարտության կապակցությամբ։ Որովհետև Ղևոնդը (էջ 54—55) Վանանդի կռիվը դնում է Վալիդի խալիֆայության սկզբի տարում, հետևաբար, այդ կռիվը տեղի է ունեցել կամ 705 թվի վերջում. (Վալիդը գահակալել է 705 թ. հոկտեմբեր ամսին), կամ 706 թվի սկզբում։

6. Կասիմ կամ Կաշմ (706)։

Մուհամմադը եկավ 4-րդ անգամ Հիջրի 85 թ. (մ. թ. 704) և մնաց մեկ տարի ըստ իբն ալ-Աթիրի (Դ 249) և Տաղրիբերդիի (Ա էջ 309), լուծելու համար Վանանդի պարտության վրեժը և ծրագրեց հայ նախարարների բնաջնջումն իր փոխանորդ Կաշմ ոստիկանի միջոցով։ Սա տեղակալ էր արդեն Նախիջևանի կողմերում և հավաքելով հայ իշխաններին Նախիջևանի և Խրամի եկեղեցիներում (Ղևոնդ, էջ 56, Վարդան, էջ 72) այրեց նրանց։ Ասողիկը (էջ 124—125) ճշտում է այդ դեպքի թվականը, որպես հայոց 153 թ. (մ. թ. 704—705)։ Արաբացի հեղինակներից Բելազորին և Յակուբին խոսում են հայ նախարարների հրկիզման մասին, դեպքը դնելով Խլաթում, առանց նշելու թվականը։ Ավելի որոշ է Տաղրիբերդին (Ա 207), որը նշում է Հիջրի 84 թ. (մ. թ. 703) ավելացնելով՝ «Այդ տարին կոչվեց հրկիզման տարի»։ Բայց արաբացի պատմիչի և Թեոփանեսի տված թվականը չի համապատասխանում Ասողիկի ցույց տված թվականին և անկասկած ետ է ասված մեկ տարով։ Հովհաննես կաթողիկոսը (էջ 125) հայ նախարարների այրվելը վերագրում է Աբդլմալիք խալիֆին, իսկ Վարդանը (էջ 70) վերագրում է Վլիթի (Վալիդ) առաջին տարվան։ Վալիդը գահակալեց 705 թ. հոկտեմբեր ամսին։ Նույնն ասում է նաև Ասողիկը (էջ 124)։ Ինչպես տեսնում ենք, աղբյուրները անհամաձայն են այս դեպքի թվականի մասին։ Համենայն դեպս բոլոր վկայությունները համադրելով, կարելի է ասել, թե դեպքը տեղի է ունեցել 705 թ. կեսին։ (Թեոփանեսը 6195 թ. է դնում, որը համապատասխան է մ. թ. 703 թվին, իսկ սա սխալ է)։

7. Աբդ ալ-Ազիզ իբն Հատիմ ալ-Բահիլի (706—709)։

Սրան ուղարկեց Վալիդ խալիֆը՝ Կասիմի խժդժություններից առաջացած խորը դժգոհության հետևանքով, հայերի շարժումը կանխելու և հայերին սիրաշահելու նպատակով։ Հայ պատմիչները (Ղևոնդ, էջ 59—60, Ասողիկ, էջ 125) նրա մասին ասում են «խօթ լսելեօք»։ Արաբացի պատմիչներից Տաղրիբերդին միայն հիշատակում է նրա անունը իբրև կառավարիչ Հիջրի 86 թ. (մ.թ. 705) և այսպիսով ստուգվում է մեր պատմիչների տեղեկությունը։

Աբդ ալ-Ազիզի իշխանության տևողության մասին պատմիչների մոտ որոշ տեղեկություն չկա, բայց պատմական դեպքերից տրամաբանորեն հետևում է, որ նա մնաց Հայաստանում մինչև Մուհամմադի անվանական կառավարչության վերջը, այսինքն 709 թ.։

Աբդ ալ-Ազիզը վերաշինեց ավերյալ Դվին քաղաքը, ամրացրեց պարիսպներով և շրջապատեց խրամով։ Այդ օրից Դվինը դարձավ արաբացի ոստիկանի նստավայրը Հայաստանում և արաբական տիրապետության միջնաբերդը։

---

[1] Այստեղ պետք է դնել Սահակ Զորափորեցի կաթողիկոսի մահվան (703 թ.) դեպքն ու Խառանի հանդիպումը։ Ղևոնդը (էջ 51) և Վարդանը (էջ 71—72) Մահմեդին են հիշում, իսկ Հովհաննես կաթողիկոսը (էջ 122) և Ասողիկը (էջ 102)՝ Ոքբային։

8. Մասլամա իբն Աբդ ալ-մալիք (709—715)։

Սա հաջորդ նշանակվեց Մուհամմադի, որը հետ կանչվեց Հիջրի 91 թ. (մ. թ. 709), ինչպես վկայում են իբն ալ-Աթիրը (Դ 266), իբն Խալդունը (Գ 70)։ Տաղրիբերդին (Ա 222)։ Հայ պատմիչները (Ղևոնդ, էջ 64, Ասողիկ, էջ 127) հիշատակում են «Մսլիմ»-ին ոչ իբրև ոստիկան Հայաստանի, այլ իբրև խազարների դեմ կռվող արաբական բանակների հրամանատար։

Սրա կառավարչությունը պետք է տևած լինի մինչև Վալիդ խալիֆի մահը[1]։ Վալիդի հաջորդ Սուլայման խալիֆը (715—720), երբ գահ բարձրացավ, Հայաստան ուղարկեց այլ ոստիկան։

9. Ատի իբն ալ-Քինդիին (715—717)։ Սրա ոստիկան նշանակվելու մասին խոսում է Բելազորին (էջ 54)։

10. Օմար իբն աբդ ալ-Ազիզը (717—720)։

Սրա մասին, բացի Բելազորիից (էջ 55) խոսում է նաև Կաղանկատվացին (էջ 369) ասելով, թե հայոց 161 թվին (մ. թ. 712) «եկն Աբդլազիզ»։ Թվականի շփոթ կա հայ պատմիչի մոտ։ Թվում է, թե այս ոստիկանը ծանոթ է եղել նաև Աբդլազիզ անվամբ, քանի որ Տաղրիբերդին (Ա էջ 239), Հիջրի 93 թ. (մ. թ. 717) տակ է հիշատակում Աբդլազիզին՝ որպես Հայաստանի կառավարիչ։

Մինչև Հիջրի 102 թ. պատմական աղբյուրները ուրիշ ոստիկան հիշատակած չինելով, պետք է հետևցնել, որ Օմարի պաշտոնավարությունը անվանապես տևել է մինչև 720 թ., այսինքն՝ մինչև Եզիդ 2-րդ խալիֆը (720—724), որի ժամանակաշրջանում ուղարկվել են չորս ոստիկաններ, սրանց թվականները ճշտվում են հետևյալ կերպով.

11. Օմար իբն Հուբայրան (720—721)։

Ըստ իբն ալ-Աթիրի (Ե 48) նա Հիջրի 120 թ. (մ.թ. 720—721) վարում է Արմինիայի բանակների հրամանատարությունը։

12. Մալամ իբն Սաֆար ալ-Բահրանի (721)։

Շատ կարճ ժամանակով տիրեց ըստ Բելազորիի (էջ 55)։

13. Ջառահ իբն Աբդուլլան ալ-Համամի (722—723)։

Սրա մասին խոսում են Թաբարին (էջ 90—91), իբն ալ-Աթիրը (էջ 52), իբն Խալդունը (Գ 139)։ Պաշտոնավարության թվականն ըստ սույն պատմիչների Հիջրի 104 թ. է (մ.թ. 722—723), իսկ ըստ Տաղրիբերդիի Հիջրի 105 թ. (723—724)։ Նա նստեց Պարտավում, ասում է Բելազորին (էջ 55)։

14. Հարիթ իբն Ամր ադ-Թային (724—725)։

Բելազորին (էջ 55) հիշատակում է սրան որպես Եզիդի կողմից նշանակված վերջին ոստիկան։ Այս ոստիկանն է Ղևոնդի հիշատակած Հերթը, որը ըստ հայ պատմիչի ուղարկվեց Հեշմ (Հիշամ, 724—743) խալիֆի կողմից և կատարեց ծանոթ աշխարհագիրը։ Կաղանկատվացին (էջ 308) դնում է նրա անվա-

---

1 Հովհաննես Օձնեցի կաթողիկոսի Դամասկոս այցելության կապակցությամբ Հովհ. կաթ. (էջ 120) և Ասողիկը (էջ 183) հիշատակում են Վլիթ անունով մի ոստիկան։ Այդ անվամբ ոստիկան չի հիշատակվում արաբական աղբյուրներում։ Կարելի չէ նաև նրան շփոթել Վալիդ խալիֆի հետ, որովհետև Վալիդ խալիֆը մահացավ 715 թ., մինչդեռ Օձնեցին կաթողիկոս եղավ 718 թ. և նա այցելեց Վալիդի հաջորդ Օմար 2-րդ (717—720) խալիֆին, ինչպես վկայում է Վարդանը (էջ 72), հետևաբար կարելի է սրան ենթադրաբար դասել փոխկառավարիչների շարքում՝ 717 թվին։

նումը հայոց 170 (մ.թ. 725) ամեռը։ Աղբյուրների այս տարբեր վկայությունները կարելի է հաշտեցնել, եթե ընդունենք այն, որ նա նշանակվեց Եզիդի կողմից (սա մահացավ 724 թ. փետրվարի 28-ին) և պահեց իր պաշտոնը նրա հաջորդ Հիշամի իշխանության սկզբում, իսկ այս վերջինի օրով էր, որ խալիֆաթի ամբողջ տարածության վրա հարկերի ընդհանուր ծանրացում կատարվեց։

15. Մասլամա իբն աբդ ալ-Մալիք (725—729, երկրորդ անգամ) նշանակվեց Հիշամ խալիֆի կողմից Հիջրի 107 թ. (մ. թ. 725—726)։ Նրա մասին հիշատակում են Բելազորին (էջ 55) առանց թվականը ճշտելու և Յակուբին (էջ 106)։ Իսկ թվականը ճշտում են իբն ալ-Աթիրը (b 64), իբն Խալդունը (Գ 137)։ Ըստ Տաղրիբերդիի (Ա 107) այդ 107 թ. Ջառահն է, որ հեռացվում է պաշտոնից, բայց Մասլամայի նշանակվելու մասին չի խոսվում։ Ըստ իբն ալ-Աթիրի Մասլաման նշանակվում է որպես Հարիթի փոխանորդ։ Այդ նշանակում է, որ Հարիթը որոշ ժամանակ անվանապես մնացել է որպես վալի։

16. Ջառահ (724—730), երկրորդ անգամ։

Անվանվեց առավելապես խազարների դեմ կռվի կապակցությամբ Հիջրի 111 թ. (մ.թ. 729—730) ըստ Թաբարիի (էջ 91), իբն ալ-Աթիրի (b 112), իբն Խալդունի (Գ 139), Տաղրիբերդիի (Ա 270)։ Նա սպանվեց խազարների դեմ կռվելիս Հիջրի 112 թվին։

17. Հաջաջ իբն Աբդալլահ ալ-Հաքամի (730)։

Իբն Խալդունը (Գ 137) հիշատակում է սրան ասելով, թե կարճ ժամանակի համար հաջորդեց իր եղբոր Ջառահին՝ նրա մահից հետո։

18. Սայիդ իբն Ամրու իբն Ասուադ ալ-Հարաշի (730—731)։

Ըստ Բելազորիի (էջ 57) նա մնաց երկու տարի։ Թաբարին (էջ 91), իբն ալ-Աթիրը (b 112), իբն Խալդունը (Գ 140) նրան դնում են որպես Ջառահի հաջորդ։ Ղևոնդը (էջ 143) հիշատակում է սրա անունը «Սեթայ, որում Հարաշ կոչէին»։

19. Մասլամա իբն ալ-Մալիք (731—732, երրորդ անգամ) ոստիկան է նշանակվում Հիջրի 112 թ. (731—732 թ.) ըստ Թաբարիի (էջ 91), իբն ալ-Աթիրի (b 74), իբն Խալդունի (Գ 139) և Տաղրիբերդիի (Ա 270)։

20. Մրուան իբն Մուհամմադ (732—750)։

Ղևոնդն (էջ 143) ասում է, թե նա ուղղակի հաջորդեց Հարաշիին, բայց արաբ, բոլոր պատմիչներն էլ նրան դնում են որպես Մասլամայի հաջորդ (Բելազորի, էջ 58), (Յակուբի, էջ 107), (Թաբարի, էջ 91), (իբն ալ-Աթիր b 83), (իբն Խալդուն Գ 140),(Տաղրիբերդի Ա 114)։ Բոլորն էլ Մրուանի պաշտոնավարության թվականը դնում են Հիջրի 115 թ. (մ. թ. 733), բացի Թաբարիից, որը դնում է Հիջրի 114 թ. (մ. թ. 732—733), ուրեմն 732 թ. վերջում։

Մրուանը մնաց Հայաստանում մինչև 744 թվականը (իբն ալ-Աթիրը b 87, 101, 113)։

Երբ նա գնաց մասնակցելու դինաստիական կռիվներին և դարձավ Օմայան վերջին խալիֆ, Հայաստանում նշանակեց փոխանորդներ հաջորդաբար, որոնք են՝

21. Ասիմ իբն Աբդալլահ իբն Եզիդ ալ-Հիլալի (744)։

Յակուբին (էջ 108) ասում է, թե հայերը սրան սպանեցին։

22. Իսհակ իբն Մուսլիմ ալ-Օքայլի (745)։

Սրա մասին խոսում է Ղևոնդը (էջ 146), իբն Խալդունը որպես Մրուանի առաջին փոխանորդ։ Հիշում են նաև Բելազորին (էջ 62), Յակուբին (էջ 108)։

Սրա ժամանակ Բագրատունիների և Մամիկոնյանների մրցակցությունը ամենասուր բնույթն ստացավ։ Օգտվելով Աշոտ Բագրատունու բացակայությունից, որը գնացել էր Մրուանի հետ, ոստիկանը հրամանատարության պաշտոնը տվեց Գրիգոր Մամիկոնյանին (Ղևոնդ նույնը)։ Դրանից հետո՝ նոր խալիֆի՝ Մրուանի հրամանով վերջինս հեռացվեց պաշտոնից, իսկ նրա եղբայր Դավիթն էլ պատժվեց։ Գրիգորը վրեժ լուծեց կուրացնելով Աշոտին։

23. Մուսաֆիր իբն Կազիր (745—750), որին չի կարելի ուղղակի խալիֆի կողմից նշանակված ոստիկան նկատել, ըստ Բելազորիի (էջ 62) և Յակուբիի (էջ 168). սա օգտվեց Մրուանի հեռանալուց և մի շարք ապստամբ գնդերի գործակցությամբ վերցրեց Արմինիայի կառավարչությունը և պահեց մինչև Աբբասյանների իշխանության գալը։ Սրա դեմ կռվեց Իսհակ իբն Մուսլիմը, որը Մրուանի կողմից նշանակված օրինավոր ոստիկանն էր։

24. Մուհամմադ իբն-Սուլի (750)։ Սրան Հայաստան ուղարկեց Աբուլ-Աբբասը՝ Օմայանների և Աբբասյանների դինաստիական բուռն կռիվների տարում (749—750 թ.)։

Մուհամմադ իբն-Սուլին կռվեց Մրուանի կուսակից Մուսաֆիրի դեմ (Յակուբի, էջ 108), նաև Մրուանի կողմից նշանակված Օքայլի դեմ և սպանեց նրան։

25. Աբու Ջաֆար ալ-Մանսուրին (750—754)։ Երբ Աբուլ-Աբբասը գրավեց խալիֆայական գահը և մի շարք երկրներ, այդ թվում Արմինիայի կառավարիչ նշանակեց իր եղբորը.

Աբու Ջաֆարի նշանակման թվականի մասին աղբյուրները մի քիչ տարբերվում են։ Թաբարին (էջ 92) և իբն ալ-Աթիրը (b 212) դնում են Հիջրի 132 թ. (մ. թ. 749—750)։ Յակուբին (էջ 109) դնում է Հիջրի 134 թ. (մ. թ. 751—752), նույնը Տաղրիբերդին (A 329), հարմարագույնն է վերցնել 750 թ. վերջի, այսինքն Աբուլ-Աբբասի խալիֆ դառնալու թվականը։ Հայ պատմիչներից Ղևոնդը (էջ 158) և Ասողիկը (էջ 131—132) հիշատակում են նրա կառավարիչ նշանակվելն իր եղբոր կողմից, կոչելով նրան «միւս Աբդլլայ», որը իսկապես նրա անունն էլ է։

Ըստ իբն Խալդունի (Գ էջ 174) Ջաֆարը մնաց Արմինիայի կառավարիչ մինչև իր խալիֆայական գահ բարձրանալը (մ. թ. 754) և կառավարեց փոխանորդների միջոցով։ Այն բոլոր աղբյուրներում, որտեղ 750 թ. և 754 թ. միջև կառավարիչներ են հիշատակվում, պետք է նկատել իբր փոխ-կառավարիչներ։ Այսպես՝

26. Աբդլլահ իբն Մուհամմադը (750), որը Հիջրի 132 թ. (մ. 750) Ջաֆարի կողմից նշանակվեց փոխանորդ (Թաբարի, էջ 92)։

27. Սալիհ իբն Սուբայհ ալ-Քինդին (751), որին Թաբարին (էջ 92) դնում է Հիջրի 132 թ.։ Ղևոնդը (էջ 165) նրան անվանում է «Ծալեհ այր անօրէն և արիւնահեղ»— Սալիհն հեռացվեց Հիջրի 134 թ. (մ. թ. 751—752)։

28. Եզիդ իբն-Ուսայդ աս-Սուլամին (752—754). Նրա մասին խոսում են Բելազորին (էջ 62), Յակուբին (էջ 109), իբն ալ-Աթիրը (b 211). հիշում են նաև Ղևոնդը (էջ 160), Ասողիկը (էջ 132) և Վարդանը (էջ 75), նրան կոչելով Եզիդ որդի Ուսադայի։ Բելազորին նրա մասին ասում է, թե ծանարներին հնազանդեցրեց։ Սրա մայրն էր ըստ Բելազորիի (էջ 54) Սիսականի պատրիկի դուստրը, որը 695 թ. Դամասկոս ուղարկված գերյալների մեջ էր։ Եզիդը Սահակ Բագրատունուն կարգեց իշխան և Բագրատունիները Աբբասյանների վար-

չական ու հարկային ամենադաժան իշխանության պայմաններում դարձյալ առաջին գծի վրա անցան Հայաստանի քաղաքական կյանքում։

Դրանից առաջ՝ 751 թ. Կոստանտին 5-րդ կայսրը գրավել էր Կարինը, ավերել ու բնակչությանը տեղահան արել դեպի կայսրության հողերը։ Եզիդը վերագրավեց Կարինը 752 թ. և տեղահան արված բնակչության պարտավորիչ աշխատանքով վերաշինեց ու ամրացրեց քաղաքը, այնտեղ հաստատելով մահմեդական զինվորական գաղութ, որի պարենը հայերը պիտի հոդային (Ղևոնդ, 161)։

Սրա ժամանակ արշավեցին խազարները, պարտության մատնելով մահմեդական զորքերին։ Անմիջապես հետո ըստ Յակուբիի տեղեկության (էջ 109—110) ծանարներն ապստամբեցին։ Նա մնաց իր պաշտոնի մեջ մինչև Հիջրի 136 թ.։

29. Հասան իբն Կահբաբա ադ-Թային (754—759)։ Հաջորդեց Եզիդին Հիջրի 137 թ. (754—755), Բելազորի (էջ 63), Յակուբի (էջ 109). նա գլխավորապես ուղարկվեց ծանարների ապստամբությունը զսպելու համար։ Ըստ Յակուբիի (էջ 109) Կահթաբան իր ուժերը անբավարար զգալով՝ օգնական ուժ խնդրեց Աբու-Ջաֆարից։ Նա էլ 20 հազարից բաղկացած բանակ ուղարկեց Ամր իբն Իսմայիլ ալ-Հարթի զորականի հրամանատարության տակ, որը ծանարների դեմ ամենախիստ կռիվ մղեց։

Հասանը շարունակեց կառավարել առանց ընդհատման մինչև Հիջրի 141 թ. (մ. թ. 758—759)։

30. Եզիդ իբն Ուսայդ աս-Սուլամի (759—770) երկրորդ անգամ (Յակուբի, էջ 109), նա հայերի վրա հարկային խիստ բռնություններ գործ դրեց (Ղևոնդ, էջ 166). այնպես որ հայերը բողոքեցին ամիրապետի մոտ, որն ուղարկեց[1]։

31. Բաքար իբն Մուսլիմ Օմայլիին (770—771) ըստ Արմինիայի և Առանի դրամների արձանագրությանց։Նա արդեն Հիջրի 152 թ. (մ. թ. 770) պետք է կառավարիչ եղած լիներ։ Նրա կառավարիչ նշանակելու թվականը դնում են Հիջրի 153 թ. (մ. թ. 771), Թաբարի (էջ 93), Տաղրիբերդի (Բ էջ 20), իսկ Բելազորին (էջ 63) թվական չի տալիս։ Ղևոնդը (էջ 167) ասում է, թե նա մնաց մեկ տարի և հետ կանչվեց. նույնը և Վարդան (էջ 75)։

32. Հասան իբն Կահբաբա (771—775, երկրորդ անգամ)։ Սրա անունը կա Հիջրի 154 և 155 թ. (մ. թ. 771—772) դրամների վրա։ Նույնի մասին խոսել է

---

[1] Դասմերը (էջ 11) անորոշություն է ցույց տալիս, մեկնելով դրամագիտական մի տվյալից. س տառը կարող է Սուլամի անվան սկզբնատառը լինել ավելի քան Սեն-Մարտենի ենթադրած Սուլայմանի։ Ճիշտ են Ղևոնդի խոսքերը այդ մասին, որն ասում է (էջ 162—163), թե Սուլայմանը պարզապես Վասպուրականի կողմերում մի ասպատակող խմբի հրամանատար էր (Եզիդի ոստիկանության ժամանակ)։ Հակասություն կա Հովհաննես կաթողիկոսի (էջ 135) ասածի և Ղևոնդի միջև, որ ցույց է տալիս, թե երկուսի հիշած Սուլայմանը միևնույն անձը չէ։ Մինչդեռ Ղևոնդն ասում է, թե նա սպանվեց Գաղիկ Արծրունուց՝ Վասպուրականի տիրապետության համար Արծրունիների մղած համառ կռիվների ընթացքում, Հովհաննես կաթողիկոսն ասում է, թե այդ Սուլայմանը հետագայում դարձավ ոստիկան Դվինում և Սիոն Բավնացուն կաթողիկոս նշանակել տվեց։ Սիոնը նշանակվեց 767 թ., որը ճիշտ համընկնում է Եզիդի երկրորդ պաշտոնավարության շրջանին։ Հետևաբար Հովհաննես կաթողիկոսի հիշատակած Սիմն Նահանդի կառավարիչ Սուլայմանը՝ Եզիդ Սուլամին է։

և Ղևոնդը (էջ 168)։ Նա իր հետ բերեց Խորասանից արաբական զորագնդեր և ծայրահեղ խստություններ ու հարկային բռնություններ էր գործադրում

Կահթաբայի ոստիկանության ժամանակ տեղի ունեցավ համաժողովրդական ապստամբություն նախ՝ Արտավազդի, ապա Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ։Այդ ապստամբության մասին ակնարկում են արաբ աղբյուրները Հիջրի 158 թվի (մ. թ. 774—775) տակ։ Այսպես Բելաղորին (էջ 63), Յակուբին (էջ 110), Թարարին (էջ 93)։ Իսկ Ղևոնդն (էջ 168—181) և Վարդանը (էջ 75) խոսել են մանրամասն։ Ապստամբությանը միացան գրեթե բոլոր նախարարական տները, որոնց մեջ և սպարապետ Սմբատ Բագրատունին, բայց հետո Արծրունիներն իրենց վասալներով ու Աշոտ Բագրատունին մեկուսացան, որով շարժումը թուլացավ և Ամր զորավարի հրամանի տակ (Բելազորի, էջ 63), Խորասանյան նոր օժանդակ գնդերը զինական մեծ պատրաստությամբ հասան և մի շարք կռիվներից հետո 775 թ. (օրինակ, Արճեշում ապրիլի 15-ին, Բագրևանդի մոտ Արծն գյուղում ապրիլի 24-ին)[1] մեծ կորուստներ տալուց հետո, հայերի ապստամբությունը ընկճվեց։

Այդ աղետից հետո էլ ավելի ծանրացավ արաբական լուծը Հայաստանի վրա, արաբ բնակչությունը շատացավ, էմիրները զորացան ի վնաս հայ նախարարական տների։ Հատկապես տուժեցին Մամիկոնյանները։ Նրանք փաստորեն քաղաքական ասպարեզից չքացան, նրանց կալվածները մասամբ անցան Ջահարյաններին, իսկ Բագրատունիները ժամանակավոր նահանջից հետո նորից գերակայություն ձեռք բերեցին։ Այնուհետև Դվինն ու Մանազկերտը դարձան արաբական առաջնակարգ դիրքեր։ Այդ տեղերից նրանց չկարողացան արտաքսել ոչ Բագրատունիներն ու ոչ էլ Արծրունիները, նույնիսկ իրենց ամենագորեղ շրջանում։

33. Վադիհ (775)։

Սրա մասին խոսել է միայն Յակուբին (էջ 110), որի նախապապն է եղել հիշյալ Վադիհը։ Ըստ նույն պատմագրի, նա պաշտոնում մնաց կարճ ժամանակ միայն, մինչև Աբու-Ջաֆար խալիֆի մահը։ Վերջինս մահացավ Հիջրի 158 թ. Զուլհիջջա ամսի վերջից 6 օր առաջ (մ. թ. 24 հոկտեմբեր, 775 թ.)։

Հաջորդ խալիֆ ալ-Մահդիի (775—785) կողմից նշանակված կառավարիչների մասին խոսող պատմիչները որոշ թվական չեն նշել, բայց կարելի է գետնել նրանց հետևյալ կարգով.

34. Եզիդ իբն Ուսայդ (775—780, երկրորդ անգամ, Հիջրի 159 թ. մ. թ. 775—776)։ Դվինի դիրհեմները Եզիդի անվամբ են, ինչպես և 163 թ. (779—780) Պարտավի դրամները. ուստի նրա պաշտոնավարությունը տևում է մինչև 780 թ. սկիզբը։ Իբն ալ-Աթիրը (Զ 24) ասում է, թե Հիջրի 162 թվին (մ. թ. 778—779) Արմինիայի բանակներին հրամայում էր Եզիդը։ Նրա մասին խոսում է նաև Ղևոնդը (էջ 186)։

35. Հարուն (780—786)։

Ալ-Մահդի խալիֆը Հիջրի 163 թվին (մ. թ. 779—780) իր որդուն նշանակեց ամբողջ արևմուտքի (որի մեջ էր նաև Արմինիան) կառավարիչ. Թաբարի (էջ 93), իբն Խալդուն (Գ 212), Տաղրիբերդի (Բ 45)։ Նա, ըստ իբն ալ-Աթիրի (Զ 25), Հայաստանում գործերի վարիչ, կամ փոխանորդ նշանակեց.

---

[1] Տես Հ. Մանանդյան, Ժողովրդական ապստամբությունները Հայաստանում արաբական տիրապետության դեմ, Երևան, 1939, էջ 18—19։

36. Յահիա իբն Խալիդ ալ-Բարմաքիին, *որը վարեց գործերը մինչև Հարունի գահ բարձրանալը 780 թ.։*

37. Օթման իբն Ումարա իբն Խուզայմի *(781—785)։ Սրա պաշտոնավարության մասին գրել է Բելազորին (էջ 63) առանց թվականը ճշտելու, բայց նրա անվամբ Հայաստանում և Առանում կտրված դրամներ կան Հիջրի 167 և 168 (մ. թ. 783—785)։ Մյուս կողմից՝ Ղևոնդն ասում է, թե (էջ 193) Օթմանը կառավարիչ էր, երբ Հայաստան իբրև իշխան ուղարկվեց Տաճատ Անձևացին, իսկ Տաճատը փախել էր Բյուզանդիայից 781 թ.՝ Հարունի արշավանքի ժամանակ։*

38. Ռաուհ իբն Հատիմ ալ-Մուհալլաբի *(785—786)։ Սրա պաշտոնավարության մասին հիշատակել է Բելազորին (էջ 63)։ Ղևոնդը (էջ 191) գրում է, թե Մահդին մահացավ «ընդ գալն Ռոհայ»։ Մահդիի մահվան թվականն է Հիջրի 169 թ. Մուհարրամ ամսի 22 (մ. թ. 4 հուլիսի 785 թ.)։*

39. Խուզայմա իբն Խազիմ Աթ-Տամիմին *(786—787)։ Նրան կառավարիչ նշանակեց Ռաշիդը, երբ գահ բարձրացավ (786 թ.), ինչպես վկայում են Բելազորին (էջ 63) և Յակուբին (էջ 110)։ Նա կառավարեց մեկ տարի և երկու ամիս՝ ըստ Բելազորու։ Խուզայմայի ժամանակ խալիֆաթի բռնակալ տիրապետությունը Հայաստանի վրա ավելի շեշտվեց. նա նորոգեց Դվին—Նախիջևան ռազմական ճանապարհը։ Ըստ Ղևոնդի Մուսա ալ-Հադին (785—786) էր, որ կառավարիչ նշանակեց Խազմին «ըստ անուանն իւրոյ խազմարար և գժոխաձև» (էջ 195)։*

40. Յուսուֆ իբն Ռաշիդ աս-Սուլամի *(787), ըստ Յակուբիի (էջ 110) նա պաշտոնի կոչվեց Հիջրի 170 թ. (մ. թ. 786—787)։ Սա Նիզարի ցեղախմբերից փոխադրեց ու բնակեցրեց Հայաստանում և երկիրն ավելի ենթարկեց արաբական լծին։*

41. Եզիդ-իբն Մազյադ իբն-Զայդա աշ-Շայբանի *(787—788)։ Սա էլ արաբական բնակչության թիվն ավելացնելու քաղաքականություն վարեց՝ Հայաստան բերելով Ռաբի՛ա ցեղից բնակիչներ։ Սրա մասին խոսում են Բելազորին (էջ 63) և Յակուբին (էջ 111)։ Իսկ ըստ իբն Խալլիքանի (Գ 297) վկայության, նա պաշտոնից հեռացվեց Հիջրի 172 թ.։ Նրա մասին խոսում է նաև իբն ալ-Աթիրը (Զ 48)։*

42. Օբայդուլլահ իբն ալ-Մահդի *(788—790)։ Սրա անունով դրամներ կան Հիջրի 172—173 և 174 թվերով (մ. թ. 788—789—790)։ Սրա մասին խոսել են Բելազորին (էջ 63), Թաբարին (էջ 94), իբն ալ-Աթիրը (Զ 48), իբն Խալդունը (Գ 215), Տաղրիբերդին (Բ էջ 70)։ Օբայդուլլահի կապակցությամբ Ղևոնդը (էջ 200) նշում է, թե նա կեղեքիչ և հարկապահանջ էր (տես նաև Ասողիկ, էջ 133—134), նա փոխանորդ նշանակեց.*

43. Սուլայմանին *(788—790), որի մասին արաբ աղբյուրները չեն խոսում, իսկ Ղևոնդը (էջ 200—203) տեղեկություն է տալիս, սակայն դնում է նրան Աբուլքաբիրից հետո. Ղևոնդը ասում է, թե Օբայդուլլահը ինքն անձամբ եկավ և սրան հաստատեց Պարտավում, իսկ Սուլայմանը սարսափելի հարկային խըստությունների դիմեց իր փեսայի՝ իբն Տոկեսի միջոցով։ Նրա ժամանակ մահացած լինելով Եսայի Եղիպատրուշեցի կաթողիկոսը (Ղևոնդ, էջ 203), (Սամվել Անեցի, էջ 89) նրա կառավարչության շրջանը այսպիսով ստուգվում է։*

44. Աբուլքաբիր իբն Աբդուլ Համիդ Զայդ իբն ալ-Խաթաբ ալ-Ադավի *(791)։ Սրա մասին հիշում են Յակուբին (էջ 111) և Ղևոնդը (էջ 200 «Աբդալքբիր»), որն ասում է «ոչ բարի ինչ գործեաց և ոչ չար. այլ գկարծիս լաւ իմն*

ցուցանէր», Նա մնաց միայն չորս ամիս։ Հետևելով իր նախորդների քաղաքականության, Ռաբի'ա ցեղից բնակիչներ բերեց և հաստատեց Հայաստանում։

45. Ֆադլ իբն Յահիա իբն Խալիդ ալ-Բարմակի (792—794)։

Սա նշանակվեց Հիջրի 176 թ. (մ.թ. 792—793) ըստ Բելազորու (էջ 63), Յակուբի (էջ 111) և Թաբարի (էջ 94) վկայություններին։ Ֆադլի անունը գտնվում է Հիջրի 175 թ. (մ. թ. 791—792) դրամների վրա (Ֆասմեր, էջ 32)։ Նրա պաշտոնի սկզբնավորության թվականը պետք է ճշտել համաձայնեցնելով երկու տվյալները։ Նա պետք է պաշտոնավարած լիներ մինչև իր մորասան գնալը Հիջրի 177 կամ 178 թ. (մ.թ. 793—795)։ Համենայն դեպս նա անձամբ չկառավարեց, այլ համաձայն Յակուբիի տեղեկության նշանակեց փոխանորդներ, որոնք կարճատև պաշտոնավարություն ունեցան։

46. Օմար իբն Այուբ ալ-Քինանի (792—793), որին Ֆադլը փոխանորդ էր կարգել (Յակուբի, էջ 111)։

47. Աբու Սաբահը և միաժամանակ Սայիդ իբն Մուհամմադ ալ-Հարանի ալ-Լահիբին (793 թ.) նույնպես Ֆադլի փոխանորդներ էին, երբ նա գնաց Իրաք (Յակուբի, էջ 111), առաջինը տուրքերի վերակացու էր, իսկ երկրորդը բանակների հրամանատար։ Ըստ Յակուբիի Աբու Սաբահի դեմ ապստամբեցին Պարտավի բնակիչները և սպանեցին նրան, իսկ Հայաստանում խառնակություն ծագեց և երևան եկավ Մուսլիմ ալ-Շարի աղանդավորը և հաստատվեց Քիլաբ ամրոցում։

48. Խալիդ իբն Եզիդ իբն Ուսայդ աս-Սուլամի (794) ըստ Յակուբիի (էջ 111)։ Ասլա Յակուբին տալիս է մի շարք ոստիկանների անուններ, առանց թվականները ճշտելու, որոնց պաշտոնավարությունը տևում է մինչև 798 թվականը։ Սրանք են.

49. Աբբաս իբն ալ-Ջարիր իբն Եզիդ իբն Ջարիր իբն Աբդալահ ալ-Բաջալի (794) ըստ Յակուբիի (էջ 112), որի ժամանակ բայլականցիների ըմբոստությունը շարունակվեց և նրան պաշարեցին Պարտավում։ Ապստամբներին զսպելու համար խալիֆն ուղարկեց Հարաշիին և Եզիդիին մեծ ուժերով։ Խոսքը այստեղ պարսիկ աղանդավորների մեծ ապստամբության մասին է Ատա ալ-Մուկաննաի (Աբու Մսլիմ կոչված) գլխավորությամբ։ Այդ ապստամբությունը, ինչպես նշում է Յակուբին, ծառայեց Հայաստանի ուժը զորեղացնելուն։

50. Մուսա իբն Իսա ալ-Հաշիմի (794—795)։

Սրա անվամբ առանձին դրամ կա Հիջրի 178 (794—795) թվով, նա պաշտոնավարեց մեկ տարի ըստ Յակուբիի (էջ 112)։ Բայց ստույգ է, որ նա 795 թ. Եգիպտոսի կառավարիչ նշանակվեց։ Այս ոստիկանը Մսլիմի խռովությունը չկարողացավ զսպել, որով Ռաշիդը ուղարկեց

51. Յահիա ալ-Հարաշիին (795—796)։ Սրա անվամբ էլ դրամ կա Հիջրի 179 թ. (795—796). Նա մահ տարածեց ապստամբների մեջ։

52. Ահմադ իբն Եզիդ իբն Ուսայդ աս-Սուլամի (796—797)։ Յակուբին (էջ 112) նշում է նրա պաշտոնավարությունը Հիջրի 179—181 թթ.։

53. Սայիդ իբն Սալմ իբն Քուտայբա ալ-Բահիլի (798—799), որը ըստ Թաբարիի (էջ 94) արդեն կառավարում է Հիջրի 182 թ. (մ. թ. 798—799). Յակուբին (էջ 113) խոսում է նրա մասին։ Նրա անվան հանդիպում ենք Հիջրի 181 և 182 թվերի դրամների վրա։ Իբն Խալիքանը (Բ 180) խոսում է

Նրա մասին, ասելով, թե նա, բացի Արմինիայից, մի շարք վայրերի կառավարչի պաշտոն վարեց հաջորդաբար (առանց հիշելու թվականը) և մեռավ Հիջրի 217 թ.։

54. Նասր իբն Հաբիբ ալ-Մուհալլաբին (799)։ Սրա մասին խոսում է Յակուբին (էջ 114)։

55. Ալի իբն Իսա իբն Մահան (799), որի մասին խոսում է դարձյալ Յակուբին (էջ 114)։ Սրա դեմ ելավ Շիրվանի ժողովուրդը։

56. Եզիդ իբն Մազյադ աշ-Շայբանի (799—801, երկրորդ անգամ), սրա մասին խոսում են Յակուբին (էջ 114), իբն ալ-Աթիրը (Զ 65) Հիջրի 183 թ. տակ, իսկ Թաբարին (էջ 94) դնում է նրա պաշտոնավարությունը Հիջրի 184 թ.։ Նրա անունով կան առանձին դրամներ Հիջրի 183 և 184 թթ. և 185 թվի Հայաստանի դրամներ (Ֆասմեր, էջ 39). նա 799 թ. հետ մղեց խազարներին Հայաստանի սահմաններից։ Մահացավ 801 թ.։

57. Ասադ իբն Եզիդ իբն Մազյադ աշ-Շայբանի (801—802). սրա մասին խոսել են Թաբարին (էջ 94) և իբն Աթիրը (Զ 85)։ Նրա անունը կա Հայաստանի և Առանի դրամների վրա Հիջրի 185 և 186 թվականներով (մ.թ. 801—802)։ Այդ թվից մինչև Հարուն խալիֆի մահը (մ. թ. 809) կառավարեցին.

58. Մուհամմադ իբն Եզիդ իբն Մազյադ (802—803)։ Սրա մասին խոսել են Յակուբին (էջ 114) առանց թվականը ճշտելու, Բելազորին (էջ 63) և իբն Խալլիքանը. նրա անունով դրամներ կան Հիջրի 186 և 187 թթ. (մ.թ. 802—803)։

59. Խուզայմա իբն Խազիմ ադ-Տամիմի (803—806), որի մասին խոսել են Յակուբին (էջ 114) և Բելազորին Հիջրի 187 թ. (մ. թ. 803) տակ։ Բայց որովհետև նրա անունով դրամ կա Հիջրի 187 թվից մինչև 191 թ. (մ.թ. 806—807), նրա իշխանության տևողությունը այդքան պետք է լինի, հակառակ Յակուբիի, որն ասում է, թե մի տարուց պակաս մնաց։ Նա էր, որ ըստ Բելազորիի Դվինից Նախիջևան զինվորական ճանապարհը բացեց, որն առաջ չկար։ Ըստ Յակուբիի հայ մեծամեծներին գլխատեց և ահավոր չարիքներ հասցրեց նրանց։ Իր դեմ ապստամբեցին վրացիք և ծանարները։ Վրացիների դեմ ուղարկեց Սայիդ իբն ալ-Հարթամ իբն Շոբա իբն Զահիր ադ-Տամիմին մեծ բանակով։ Սա կռվեց վրացիների և ծանարների դեմ և վերջիններին վտարեց երկրից ու հասավ մինչև Թիֆլիս։

60. Սուլայման իբն Եզիդ իբն Ասամ ալ-Ամիրի (806—807), որին Յակուբին (էջ 114) կոչում է զառամյալ ծերունի։ Սրա անունով առանձին դրամ կա Հիջրի 192 (մ.թ. 807) թ.։

61. Ալ-Աբբաս իբն Զուֆար՝ալ-Հիլալի (807), որի մասին հիշատակում է Յակուբին (էջ 115). նրա դեմ ապստամբեցին ծանարները և նեղ դրության մատնեցին, որով Ռաշիդն ուղարկեց.

62. Յահիա իբն Զուֆար կամ Զոմայր (808). այս անձի մասին պատմիչների մոտ ոչ մի հիշատակություն չկա, բայց նրա անվամբ դրամ կա Հիջրի 193 թ. (մ.թ. 808—809)։ Ֆասմերը (էջ 44) սրան դնում է հաջորդից հետո. ըստ իս՝ սխալմամբ։

63. Մուհամմադ իբն Զահիր կամ Զոմայր իբն Մուսայիդ ադ-Դաբբի (809), որի մասին խոսում է Յակուբին (էջ 115), թե նա եղավ Ռաշիդի կողմից նշանակված վերջին կառավարիչը։

64. Ասադ իբն Եզիդ իբն Մազյադ (809—811)։ Յակուբին (էջ 115) ասում է, թե նա նշանակվեց ալ-Ամին խալիֆի կողմից։ Ուրեմն նրա պաշտո-

նավարությունը սկսվում է 809 թ. օգոստոսից հետո։ Նրա անվամբ գրամներ կան Հիջրի 193 և 194 թթ. (մ. թ. 809—810—811)։ Յակուբին տեղեկացնում է, թե խալիֆը նրան հեռացրեց պաշտոնից, բայց չի շեշտում թվականը, որովհետև երկրում խռովություններ կային, իսկ Ասադը մեղմությամբ էր վարվում ապստամբների հետ։ Նա մահացավ Հիջրի 195 թ. (մ.թ. 810—811)։

65. Իսհակ իբն Սուլայման ալ-Հաշիմի (811—813), որն անձամբ չեկավ, այլ ուղարկեց իր որդուն։ Ֆասմերը (էջ 55) նշում է, թե Հիջրի 195 թ. (մ. թ. 810—811) դրամի վրա կա Ահմադ իբն Եզիդի անունը. նույնը, որ 795—796 թթ. ոստիկան էր (№ 50)։ Թեև պատմական կարգից դուրս է նա, բայց կարելի է նկատի ունենալ նրան, եթե միայն դրամական արձանագրության ընթերցման շփոթություն չկա։

66. Ֆադլ (811—813), իբրև տեղապահ հաջորդեց իր հորը, Յակուբի (էջ 111)։ Հիջրի 196 թ. (մ. թ. 811—812) առանական դրամների վրա կա Իսհակ իբն Սուլայմանի անունը։ Ֆադլի պաշտոնավարությունը պետք է տևած լինի մինչև 813 թվականը, որովհետև այդ թվին, այսինքն Հիջրի 198 թ., ինչպես ասում է Յակուբին (էջ 115), Հայաստանը գտնվում էր արդեն ապստամբ Արդլմալիք իբն Ջահաֆ Սուլամիի և Մուհամմադ իբն Իդարի ձեռքում։ Հարունի մահից հետո խալիֆայական նահանգների մեջ տարածված երկպառակտությունները արձագանք գտան նաև Հայաստանի արաբների մոտ։ Մանազկերտում ամրացած Կայսիկ Ջահաֆ էմիրը, որը Բագրևանդի կռվից հետո տիրացել էր Արշարունիքին և իր դիրքն ամրացրել էր ամուսնանալով Մամիկոնյան իշխանուհու հետ, փորձում էր գրավել նաև Կամսարականների կալվածները։ Այս առթիվ էր, որ վերջիններս Շիրակը վաճառեցին Աշոտ Մսակերին։ Հարունը Հայաստանի մահմեդական ապստամբ էմիրներին հակազդելու համար սկսեց նպաստավորել Բագրատունիներին և 806 թ. Աշոտ Մսակերին նշանակեց Հայաստանի իշխան։ Նա կռվեց ապստամբների դեմ և Ջահաֆից գրավեց Արշարունիքի մի մասը և ուրիշ վայրեր (Վարդան, 78—79)։ Մուհամմադ իբն Հաղաբը (Իգաբ) Թիֆլիսի էմիրն էր, որ ծանարների և Կախեթի մթավարիի օգնությամբ ապըստամբեց խալիֆի դեմ։ Այս ապստամբությունը մի պահ զսպեց Աշոտ Կյուրապաղատը։

67. Թահիր իբն Մուհամմադ աս-Սանանի (813)։

Նրան պաշտոնի կոչեց Ալ-Մամուն խալիֆը, երբ իշխանության գլուխ անցավ (813 թ. հոկտեմբերից)։ Յակուբին ասում է, թե (էջ 115—116) նա կռվեց Իսհակ իբն Սուլայման ոստիկանի դեմ, որն Ալ-Ամինի կողմնակիցներից էր և որին օգնում էին Առանի իշխան Արդ էլ-Ռահմանը (Վարազտրդատ), Ներսեհը և ուրիշները (ونرسى و عبدالرحمن بطريق الران و جماعة من البطارقة)։ Թահիրի անվամբ կան առանական դրամներ Հիջրի 196 և 197 թթ. (մ.թ. 811—812—813), ըստ Ֆասմերի (էջ 56)։ Թահիրի ժամանակ ապստամբություններ ծավալվեցին և նա պաշարվեց Պարտավում։ Մամունն ուղարկեց Սուլայմանին (ըստ Յակուբիի) կամ Խալիդին (ըստ Բելազորու) նույն տարում իբրև կառավարիչ։ Այս մեկ տարվա պատմագրական և դրամագիտական տվյալները մի քիչ շփոթ են, այնպես որ դժվար է խիստ կարճատև պաշտոնավարություն ունեցող կառավարիչների հաջորդականության շարքը ճշտել. մոտավորապես կարելի է նրանց դասել հետևյալ կերպ.

68. Խալիդ իբն Եզիդ իբն Մազյադ աշ-Շայբանի (813), որը նշանակ-

վեց Մամունի կողմից, ըստ Բելազորիի (էջ 63)։ Սա հայ իշխաններից ընդունում էր ընծաներ և նրանց հետ բարեկամությամբ էր վարվում։

69. Աբդլմալիք իբն Ջահաֆ աս-Սուլամին (813 թ.), որի անունը Հիջրի 196 և 197 թթ. (մ. թ. 812—813) դրամների վրա կա և որի մասին Աբդլլա անվամբ խոսում է Վարդանը (էջ 77) իբրև ապստամբ և իշխանություն բռնագրավող։ Կայիսյան (Կայսիկ) այդ էմիրների գործունեությունը տևում է 8-րդ դարի վերջից մինչև 813 թ. Ջահաբի ապստամբությունը և 813—820 թթ. նրա որդու Աբդլմալիքի և 820—823 Սևագայի գործունեությունը։ Սրանց ծավալողականության դեմ արգելք եղան Բագրատունիները համառ կռիվ մղելով։

70. Սուլայման իբն Ահմադ իբն Սուլայման ալ-Հաշիմի (813), որը եկավ զսպելու ապստամբությունը (Յակուբի, էջ 116)։ Սրա անվամբ առանձնական դրամներ կան Հիջրի 197 թ. (մ. թ. 813)։

71. Ալ-Աբբաս իբն Զուֆար ալ-Հիլալի (813, երկրորդ անգամ), որն ուղարկվում է հավանարար Սուլայմանին հաջորդելու։ Սրա անունը կա Հիջրի 197 թ. դրամների վրա։

72. Աբու Աբդալլահ (814)։ Այս ոստիկանը ծանոթ է միայն Հիջրի 198 թ. իր անունը կրող դրամներով (Ֆասմեր, էջ 59)։

73. Հատիմ իբն Հարթամա իբն Այան (817—818), որը Հայաստան դալուց մի քանի օր հետո լսեց իր հոր Հարթամայի՝ Մամունի կողմից սպանման լուրը և միացավ ապստամբներին (Յակուբի, էջ 116—117), Վեյլը Weil, Բ, էջ 298, իբն ալ-Խութայրայից առնելով նշում է, թե Բաբեկը այդ առթիվ տիրացավ Ադրբեջանին։ Բաբեկի ամրացմանը նպաստեց նաև Սյունյաց Վասակ իշխանը, որ 821 թ. Սևադայի հարձակումներից պաշտպանվելու համար, հրավիրեց Բաբեկին։ Վերջինս հաջորդ տարին, Վասակ իշխանի մահից հետո ամուսնացավ նրա աղջկա հետ (Կաղանկատվացի, էջ 374—375)։ Բելազորին գրում է (էջ 63), թե Հայաստանի իշխանները նստած էին իրենց երկրներում և նրանցից ամեն մեկը պաշտպանում էր իր դավառը։ Երբ այստեղ էր գալիս ամիրապետի ոստիկանը, նրանք ջանում էին նրան սիրաշահել։ Եվ եթե նա նրանց հետ ալևիվ, բայց խիստ վարվեր՝ նրանք հարկ էին վճարում, հակառակ դեպքում նրան հրապարակով հայհոյում էին ու արհամարհում նրա հրամանը։

Հատիմի անվամբ դրամներ կան Հիջրի 201—203 թթ., որից հետևում է թե նա փաստորեն պահել է իշխանությունը մինչև 818 թ.։

74. Յահիա իբն Մուադ իբն Մուսլիմ (818—820)։ Ըստ Յակուբիի հիշատակության (էջ 117) նա անհաջող կռիվ մղեց Բաբեկի դեմ, որից դժգոհ մնալով խալիֆը նրա փոխարեն ուղարկեց.

75. Ռսա իբն Մուհամմադ Աբու-Խալիդին (820—823), որի պաշտոնավարությունն սկսվում է Հիջրի 205 թ. (Յակուբի, էջ 117, Թաբարի էջ 94, իբն ալ-Աթիր, Զ 149, Տավրիբերդի, Բ 179),— նրա անվամբ դրամներ կան Հիջրի 207 կամ 822 մ.թ. (Ֆասմեր, էջ 65)։

76. Մուհամմադ իբն Աբդալլահ Ալ-Քալբի (823), որին պատմագիրները չեն հիշատակում, բայց իր անվամբ դրամ կա Արմինիայի և Առանի 205 և 207 թթ. մ. թ. 822—823 (Ֆասմեր, էջ 65)։

77. Զուրայիկ իբն Ալի իբն Սադակա ալ-Ազդի (825), որի մասին գրել են Յակուբին (էջ 117—118), Թաբարին (էջ 94—95), իբն ալ-Աթիրը (Զ 159), Տաղրիբերդին (Բ էջ 187). իր անվամբ առանձնական դրամ կա Հիջրի 208 և 209 թթ.

(823—824), նա հազիվ մեկ տարի մնաց, երբ պաշտոնանկ եղավ և ապստամբեց խալիֆի դեմ։

78. Աբդլ-Ալա իբն Ասադը (825—826), որի մասին պատմիչները ոչինչ չեն ասում, բայց իր անվամբ դրամ կա Հիջրի 210—211 թթ. (Ֆասմեր, 67) (մ. թ. 825—826)։

79. Մուհամմադ իբն Հումայդան ադ-Թուսի (827—829). Նրա պաշտոնավարության տարբեր թվականներ են տալիս պատմիչները։ Յակուբին (էջ 117) թվական չի տալիս. իբն ալ-Աթիրը (Զ 165) դնում է Հիջրի 211 թ. (մ.թ. 826), իսկ Տաղրիբերդին (Բ 203) Հիջրի 212 թ. (մ.թ. 827)։ Նա մի շարք պարտություններ կրեց Բաբեկից և ի վերջո սպանվեց։ Կաղանկատվացին (էջ 375) նրա պաշտոնի տևողությունը դնում է երկու տարի։ «Եւ յետ երկուց ամաց եհար Բաբան զՏաւուսին և հալածական արար անձինս իբրու երկու հարիւր և յիսուն հազար»։ Այդ լինում է հայոց 276 թ. (մ.թ. 827) երկու տարի վերջ, այսինքն՝ 829 թ., որը համապատասխանում է նաև արաբ հեղինակների տվյալներին, որովհետև Հումայդայի սպանման թվականը դնում են Հիջրի 214 թ. (մ.թ. 829), Յակուբին (էջ 118), իբն ալ-Աթիրը (Զ 168), Տաղրիբերդին (Բ 209)։

80. Աբդալլահ իբն Թահիր (829)։ Նրա մասին խոսում են Յակուբին (էջ 118), իբն ալ-Աթիրը (Զ 169)։ Ըստ իբն Խալլիքանի տեղեկության, նա հեռվից՝ Խորասանից ղեկավարեց Բաբեկի դեմ պատերազմը տեղակալների միջոցով։ Բայց իբն ալ-Աթիրի տեղեկությունից հետևում է, որ նա մինչև իր Խորասան մեկնելը Խարիջի ապստամբների դեմ կռվելու համար կարճ ժամանակով մնաց Հայաստանում։ Նրա մահից հետո, ըստ Յակուբիի վկայության, մինչև Մամուն խալիֆի մահը (833) հետևյալ կառավարիչները նշանակվեցին.

81. Աբդլ-Ալա իբն Ահմադ իբն Եզիդ իբն Ուսայդ աս-Սուլամի (829, երկրորդ անգամ)։ Յակուբին (էջ 118) չի ճշտում թվականը, ասում է միայն, թե նա անկարող եղավ կառավարել և ապստամբ իրն Ատտաբից պարտվելով ստիպված եղավ փախչել։ Նրա դեմ ելան նաև ծանարները։ Նրա փոխարեն նշանակվեց.

82. Խալիդ իբն Եզիդ իբն Մազյադ աշ-Շայբանին (829—832, երկրորդ անգամ)։ Նրան հաջողվեց հպատակեցնել ապստամբներին։ Նա էր, որ Ալի իբն Շուայբին Թիֆլիսի կառավարիչ նշանակեց (Brosset — Histoire de la Georgie, I, 265)։ Աշոտ Կյուրապաղատը Խալիդ ոստիկանի հետ դժտվեց մի պահ։ Իր մահից հետո էր, որ Խալիդ ոստիկանը Ալի իբն Շուայբին նշանակեց Թիֆլիսի էմիր։ Խալիֆի դեմ ապստամբեցին Մանազկերտի կայսեցիք (Ջահաֆյան Սևադան) Ալի իբն Յահիայի մասնակցությամբ։ Ոստիկանը զսպեց այդ շարժումն էլ (Յակուբի, 118)։ Երբ ոստիկանը խլաթ հասավ, Սևադան նրան դիմավորեց և նա ներում շնորհեց։ Խալիդի անվամբ դեռ Հիջրի 212 թվից (ս. թ. 827) առանձնական դրամներ կան, ապա մինչև Հիջրի 217 թ. (մ. թ. 832) դրամների վրա (Ֆասմեր, էջ 73), որով ճշտվում է նրա կառավարության թվականը։ Խալիդը հիշատակվում է հայ պատմիչներից «Հոլ» անվամբ (Հովհ. կաթ. 145—146, Օրբելյան, էջ 157). Կաղանկատուացին հիշում է որպես խազը փատգոս (էջ 378) առավելապես նրա 3-րդ պաշտոնավարության առթիվ (844 թ.)։ Հոլի այս երկրորդ պաշտոնավարության միջոցին էր, որ տեղի ունեցավ Հրազդանի ափի վրա Կավակերտի կռիվը մի կողմից արաբ ոստիկանի և մյուս կողմից Սմբատ սպարապետի, Սահակ Սյունյաց իշխանի և Սևադա Ջահաբյան էմիրի

միացյալ ուժերի միջև 832 թ., քանի որ ըստ Հովհ. կաթողիկոսի (էջ 146) այդ դեպքից անմիջապես հետո մահացավ Դավիթ Կակաղեցի կաթողիկոսը (833)։

83. Աբդալլահ իբն Մասադ ալ-Ազդի (832). շատ կարճ ժամանակի համար միայն, ինչպես ասում է Յակուբին (էջ 119). նրա մահից հետո հաջորդեց իր որդին։

84. Ալի իբն Աբդալլահը (832), որի մասին հիշատակում է Յակուբին (էջ 119)։ Երկիրը հուզված դրության մեջ լինելով նա շուտով հեռացվեց և նրա փոխարեն նշանակվեց.

85. Աբդ-Ռահման իբն Խական (833)։ Սրա մասին պատմիչները ոչինչ չեն ասում։ Նա ծանոթ է այդ թվի իր անվամբ Արմինիայում դրոշմված դրամից (Ֆասմեր, էջ 78)։ Նա էլ շատ կարճ ժամանակ մնաց։

86. Հասան իբն Ալի ալ-Բաղդիսի (833—835). ըստ Յակուբիի (էջ 119) նրան նշանակեց Մամուն խալիֆը, իսկ ըստ Բելազորիի (էջ 64) Մու՛տասիմը։ Համենայն դեպս նրա պաշտոնավարության թվականը (833 թ.) երկու կերպով էլ կարդարանա։ Սա պետք է լինի Կաղանկատուացու (էջ 378) հիշատակված «Բաղդի ամիրան»։ Այդ ոստիկանի անունը գտնում ենք Հիջրի 220 թ. (մ.թ. 835) առանական դրամների վրա։ Բաբեկի ծավալվող շարժման դեմ Մու՛տասիմի կողմից մեծ ուժերով ուղարկվեց.

87. Աֆշին Հայդար իբն Քաուսը (835—837). ըստ արաբական աղբյուրների Հիջրի 220 թվին նշանակվեց, Թաբարի (էջ 95), իբն ալ-Աթիր (Զ 182), Տաղրիբերդի (Բ 232), իբն Խալլիքան։ Նա կռվեց և հաղթեց Բաբեկին (Իբն Խալդուն, Գ 259—261, Յակուբի, էջ 119) և գերի վերցնելով նրան Սահլ Սմբատյանի օժանդակությամբ վերադարձավ Սամառա։ Նրա եկած ժամանակ Սահլ Սմբատյանը Առանի մեջ ապստամբվել և երկրին տիրացել էր, երբ Մուհամմադը գնաց նրա վրա։ Սահլը հաղթեց նրան։ Թվում է, թե Աֆշինը թույլ տվեց Սահլին պահել իր իշխանությունը, փոխարենը ստանալով նրա աջակցությունը Բաբեկի դեմ։

Աֆշինը փոխանորդ նշանակել էր իր գալու ժամանակ

88. Մուհամմադ իբն Սուլայման ալ-Ազդի ալ-Սամարկանդին (835—837)։ Ըստ Յակուբիի (էջ 120) Հիջրի 223 թ. նշանակվեց։ Ապա նշանակվեց

89. Մուհամմադ իբն Խալիդ Բուխարա Խոդան (839), դարձյալ Աֆշինի կողմից, ըստ Յակուբիի (էջ 120)։ Ապա նրան հաջորդեց՝

90. Ալի իբն Հուսայն իբն Սիբայ, Կայսիկը (840), որին ժողովուրդը «որբ» էր անվանում (Յակուբի 120) իր թուլության համար։

91. Խալիդ իբն Եզիդ իբն Մազյադ աշ-Շայբանի (841, երրորդ անգամ)։ Նշանակվեց Մու՛տասիմ խալիֆի կողմից (Յակուբի, էջ 120), բայց որովհետև նրա գալուստը երկրի մեջ ապստամբություն էր առաջացրել, Մու՛տասիմը հետ կանչեց նրան և նշանակեց

92. Ալի իբն Հուսայնին (841, երկրորդ անգամ)։ Սրա դեմ ապստամբեցին իր գնդերը (Յակուբի, էջ 120), որով խալիֆն ուղարկեց

93. Հումայդա (կամ Համդոյ) իբն Ալի իբն Ֆաղլին (841), ըստ Յակուբիի (էջ 121)։ Այս բոլորը ըստ Յակուբիի վկայության տեղի է ունենում Մու՛տասիմի խալիֆայության շրջանում (833 թ. մինչև 842 թ. հունվարի 16-ը) և որովհետև Յակուբին նրանց յուրաքանչյուրի պաշտոնի ստույգ թվականը չի տալիս, իսկ մյուս արաբ հեղինակներն էլ սրանց մասին չեն խոսել, մնում էր մոտավորապես զետեղել նրանց ըստ հարակից պատմական դեպքերի՝ սկսելով

Աֆշինի մեկնման ստույգ թվականից (837 թ.) մինչև 842 թ. այսինքն 4 տարիների ընթացքում։

94. Խալիդ իբն Եզիդ իբն Մազյադ աշ-Շայբանի (842—845, չորրորդ անգամ)։

Սա ուղարկվեց Վաթիկ խալիֆի կողմից մի բանակով։ Նրան հաջողվեց ժամանակավորապես ղսպել ապստամբ մահմեդական տարրերը (Յակուբի, էջ 131), բայց Հիջրի 230 թ. (մ.թ. 844—845) կրկին ապստամբություն բռնկվեց և նա կրկին ուղևորվեց դեպի Հայաստան և մահացավ Հիջրի 230 թ. և թաղվեց Հայաստանի Դարիլ (Դվին) քաղաքում։ Ըստ Յակուբիի և իբն Խալլիքանի (Գ. 297) նրա դագաղը փոխադրվեց Դվին։ Ասողիկը (էջ 106) գրում է «ի սորայ (Սմրատ Աբլաբաս իշխան) ատուրս ի ՄՂ թուականին (841—842) Խալթ իպն Եզիտ հայոց ամիրայ եկն և էանց բաղմութեամբ ի Վիրս և մեռաւ ի Ջաւախս ի գիւղն-որ կոչի Խոզաբեր»[1]։

95. Մուհամմադ իբն Խալիդ (845—849)։ Նախորդի որդին էր, ըստ Յակուբիի (էջ 121)։ Կաղանկատուացին (էջ 378) նույնպես հիշատակում է «և ի նմին ամի սատակեցաւ (Խալիդը) իսկ նորուն որդին եկեալ էառ զաշխարհս սրով և գերութեամբ»։ Նրա հետ միաբանեց Աշոտ Կյուրապաղատի որդի Բագրատը։ Նա կռվեց Թիֆլիսի Իսհակի և ծանարների դեմ։

Սրանից հետո Մուտավաքիլը նշանակեց իր որդուն։

96. Մու'տազզ Բիլլահին (849). Նրա նշանակման թվականն է Հիջրի 235 թ., ըստ Յակուբիի (էջ 122) և Թաբարիի (էջ 96), իսկ Հիջրի 234 թ. է տալիս իբն ալ-Աթիրը (Ե 19)։ Մու'տազը կամ Իբրահիմ Մուայիդ Բիլլահը, ըստ Յակուբիի վկայության ուներ Ասորիքը, Ատրպատականն ու այլ վայրեր, որով նրա կողմից փոխանորդ նշանակվեց.

97. Աբու Սայիդ Մուհամմադ իբն Յուսուֆ ալ-Մարուազին—849—850, որին հայ պատմիչները կոչում են Աբու Սեթ (Հովհ. կաթ. էջ 149), Թովմա Արծրունի(էջ 183), Ասողիկ (էջ 102), Օրբելյան (էջ 169)։

Պատմական վկայությունների մի փոքր շփոթ կա այստեղ. մանավանդ Աբու Սեթի և նրա որդու Յուսուֆի անունները շփոթվել են և մեկի անվան հետ կապված դեպքերը վերագրվել են մյուսին։ Թովմայի վկայությունն ընդունելով իբր հիմք և մյուս աղբյուրներն էլ համադրելով, կարելի է դեպքերը դասավորել հետևյալ կերպով.

Աբու Սեթը գալիս է Հայաստան Մուտավաքիլ խալիֆի կողմից, հարկային խստություններն իրագործելու համար։ Խալիֆաթը մոտ կես դար ներքին երկպառակությունից տկարացած և եկամուտներից զրկված լինելով՝ փորձում է իր դիրքը վերականգնել։ Աբու Սեթի նշանակած հարկահանները՝ Մուսա իբն Զուրարան վռնդվում է Տարոնից և Ա'լան ծովափին պարտվում է Վասպուրականում (Թովմա, 188)։ Տեսնելով հայերի դիմադրությունը և իր ուժերի պարտվելը, Աբու Սեթը վերադառնում է խալիֆի մոտ, նոր ուժեր ստանալու համար։ Խալիֆը կրկին է ուղարկում նրան, հրահանգ տալով ընկճել հայերի դիմադրությունը։

[1] Ընդունելի չէ Ֆասմերի (էջ 85) հայտնած կարծիքը, թե Խալիդ ոստիկանը հայ պատմիչներից «Հաուլ» կամ «Հօ» կոչվելը անվան աղավաղումից է առաջացել։ Ըստ իս, նա հոլ է կոչվել մահմեդականներից իր բռնություններ և առիթ եղած սարսափի պատճառով։ «Հաուլ» արաբերեն լեզվով նշանակում է «սարսափ», «ահաբեկում»։ Եգիպտոսի սֆինքսին ժողովուրդը Աբուլ-հոլ է ասում. մինչև օրս էլ արաբ մայրերը իրենց երեխաներին վախեցնում են «Աբուլ-հոլը գալիս է» ասելով։

ճանապարհին նա մահանում է։ Աբու Սեթի մահվան թվականը աղբյուրները տարբեր ձևերով են տալիս։ Յակուբին (էջ 122) տալիս է Հիջրի 237 թվականը (մ. թ. 851 հուլիսի 5—852 հունիսի 22), Թաբարին (էջ 96) և իբն ալ-Աթիրը (է 22) տալիս են Հիջրի 236 թ. (մ. թ. 850 հուլիսի 15—852 հուլիսի 4)։ Բելազորին (էջ 64) տալիս է Մուտավաքիլ խալիֆի 2-րդ տարին, այսինքն՝ 849-ի, բայց նա չի հիշատակում Աբու Սայիդին, այլ միայն Յուսուֆին։

98. Յուսուֆ ալ-Մարուազին (851—852). Նրա նշանակումը Յակուբին ցույց է տալիս (էջ 122) Հիջրի 237 թվին (մ. թ. 851—852)։ Բելազորին (էջ 64) թվականը չի դնում, Թաբարին Հիջրի 236 թ., իսկ իբն Աթիրը (է էջ 25) Հիջրի 237 թ. է դնում։

Յուսուֆը դալիս է Հայաստան, ձերբակալում Տարոնի Բագարատ և Վասպուրականի Աշոտ իշխաններին և ուղարկում Սամառա։ Այդ արարքների դեմ ծավալվում է համաժողովրդական ապստամբություն։ Նա գնում է խութեցիների դեմ և սպանվում։

Յուսուֆի սպանման թվականը դնում են Հիջրի 237 թ. (Բելազորի, էջ 65, Յակուբի, էջ 122, իբն Միսկավայհ, էջ 77, իբն ալ-Աթիր, է էջ 25, իբն Խալդուն, Գ էջ 275, Տաղրիբերդի, Բ էջ 290)։ Ըստ Թաբարիի՝ ճշտագույն թվականն է Հիջրի 237 Ռամազան ամսին (852 թ. փետրվարի 26-ից-մարտի 26-ը), տեսնել և Հովհ. կաթ. (էջ 142), Թովմա Արծրունի (էջ 202), Վարդան՝ (էջ 80), Ասողիկ (էջ 107), Սամվել Անեցի (էջ 92), Կիր. Գանձակեցի (էջ 73), Օրբելյան (էջ 169)։

99. Բուղա ալ-Քաբիր ալ-Շարաբի (852—855)։ Հայերի ապստամբությունը զսպելու համար ուղարկվեց Բուղան, որի հալածանքները տևեցին մինչև 855 թվականը։ Նա ուղարկվեց Հիջրի 237 թ., ինչպես վկայում են Բելազորին (էջ 65), Յակուբին (էջ 123), իբն Միսքաուայհ (էջ 78), Թաբարին (էջ 98), իբն ալ-Աթիրը է էջ 26)։ Տաղրիբերդին (Բ 295)։ Նա վերադարձավ Սամառա Հիջրի 241 թ. (մ.թ. 855—856), ըստ Բելազորու (էջ 65)։

Բուղայից անմիջապես հետո նշանակված երկու ոստիկանների մասին հիշատակություն կա պատմական աղբյուրներում։

100. Իբրահիմ (856), որի անձը շատ ծանոթ չէ. ըստ Թովմայի (էջ 311) Բուղան գնալիս նշանակեց «զԱպրահիմ ոմն»։

101. Մուհամմադ իբն Խալիդ իբն Եզիդ իբն Մազյադ (857, երկրորդ անգամ), որի մասին վկայում են Յակուբին (էջ 124), Կաղանկատուացին (էջ 380), «Մահմետայ Խաղթի որդւոյ» բառերով, առանց թվականի ճշտման, համենայն դեպս խիստ հավանաբար, Բուղայի մեկնելու հաջորդ տարին։ Իսկ թե մինչև որ թվականն է նա մնացել, մնում է անորոշ։

Սրանից հետո, մինչև 862 թ. Հայաստանի վրա նշանակված ոստիկանի անուն չկա աղբյուրներում։

102. Ալի իբն Յահյա ալ-Արմանի (862—863). Նշանակվեց ըստ Թաբարիի (էջ 101) Հիջրի 248 թ. Ռամազան ամսին (մ.թ. 862 նոյեմբեր), խոսում են նաև իբն ալ-Աթիրը (է էջ 45), իբն Խալդունը (Գ 283)։ Յակուբին (էջ 123) դնում է Հիջրի 249 թ., ինչ որ թվում է, թե սխալ է։

Նրա մեկ տարվա պաշտոնավարության կարևորագույն գործերը եղան Աշոտ Բագրատունու իշխանաց իշխան անվանվելը և Սամառայում աքսորված հայ իշխանների ազատ արձակվելը (տեսնել Հովհ. կաթ., էջ 169, Վարդան, էջ 82, Սամվել Անեցի, էջ 94, Ասողիկ, էջ 110 և 136)։ Ալին սպանվեց բյուզանդացիների դեմ մղված կռվում։ Նրա մահվան թվականն է Հիջրի 249 թ. Ռամազան

ամիսը (մ. թ. 863, հոկտեմբերի 18—հոկտեմբերի 16), Յակուբի (էջ 124), Մասուդի-Մրուջ Դ 214, Թաբարի, էջ 111, իբն ալ-Աթիր է—26)։

Այնուհետև սկսվում է Աշոտի իշխանապետության շրջանը։

103. Մու'իզզ — Մուտազզ խալիֆը իր եղբոր Մու'ռիզզին նշանակեց Ուալի (Վալի), իսկ՝

104. Ալա իբն Ահմադ ալ-Ազդիին (865...?)։ «Ամիլ» ըստ իբն Խալդունի (Դ 291)։

Հիջրի 251 թ. (մ. թ. 865) հիշատակում է նրան նաև իբն ալ-Աթիրը (է էջ 63), իսկ 252 թ. (մ. թ. 866), Թաբարին (էջ 102)։

Սա նույն Յուսուֆ Մարուազիի կողմից նշանակված հարկահավաքն է։

105. Իսա իբն ալ-Շայխ իբն ալ-Սալիլ աբու-Մուսա ալ-Ջուռիռի աշ-Շայբանին (870)։ Արմինիայի ոստիկան նշանակվեց հեռացվելով Ասորիքից խալիֆի դժգոհության պատճառով Հիջրի 256 թ. (մ. թ. 870)։ Ըստ իբն ալ-Աթիրի (է 94) և Աբուլ-Ֆիդայի, Բ էջ 51, Հիջրի 257 թ. (871), իսկ ըստ Թաբարիի (էջ 101) և իբն Խալդունի (Դ 301 և 309)։

Իսա իբն Շայխի Հայաստանում ունեցած ուղղակի պաշտոնավարությունն ընդհատվեց մի քանի անգամ Ատրպատականում և Վերին Միջագետքում, խալիֆի դեմ ծագած ապստամբական շարժումներին նրա մասնակցության հետևանքով։

106. Ջաֆար ալ-Մուֆաուիդ (875). Հիջրի 261 թ. Շաուալ ամսին (9 հուլիս — 7 օգոստոս — 875 թ.), ալ-Մուտամիդ խալիֆը իր որդուն Ջա'ֆարին նշանակեց փոխարքա Եգիպտոսի, Ասորիքի, Մուսուլի, Արմինիայի և Խորասանի (իբն ալ-Աթիր, է էջ 110 և Տաղրիբերդի, Դ էջ 33)։

Բայց արդեն մենք տեսնում ենք, որ 877 թվին Իսան Հայաստանում է գտնվում և ձեռնարկում է Պարտավում պատժական գործողություններ, իր նշանակած փոխանորդ Մուհամմադ իբն Աբլ-Ուահիդ ալ-Յամանիի դեմ (Թովմա, էջ 352), (Կաղանկատուացի, էջ 381)։

Իսան կռվեց այդ ապստամբի դեմ Աշոտ իշխանի գործակցությամբ, առանց նրան հաղթել կարողանալու։ Այդ ձախողանքից հետո վերադարձավ Ամիդ, որտեղ էր իր կենտրոնը։ Իբն ալ-Աթիրը ասում է, թե (է 133) Հիջրի 266 թ. (879—880), երբ Իսան Ամիդումն էր և Մուսա իբն Ջուրարան Արզնում, խալիֆը փորձեց հեռացնել նրանց իրենց պաշտոնից։ Նրանք պատրաստվեցին զինված դիմադրություն ցույց տալ, որով խալիֆն պարտավորվեց պահել նրանց իրենց գավառների պաշտոնի մեջ։

107. Մուհամմադ իբն Խալիդ (878, երրորդ անգամ), որն արդեն ոստիկան էր եղել 857 թ. Բուղայի հեռանալուց հետո. այս Մուհամմադին (մեր պատմիչների Ահմաթը)։ Նրա և Պարտավի Մուհամմադի ու Մանազկերտի Կայիսյան Աբլբատ էմիրի միջև թարուն հարաբերություններին ծանոթանալով, իշխանաց իշխան Աշոտը, հազիվ նա Դվին հասած, զինաթափ արեց նրա ուժերը և անփառունակ կերպով վերադարձրեց «ընդ նույն ուստի եկն» (Թովմա, էջ 358)։

Պատմական այս շրջանի դեպքերի շուրջը մի քիչ շփոթ կա։ Ըստ Թաբարիի Հիջրի 266 թ. (879—880) Հայաստանի, Մուսուլի և Դիար Ռաբի'այի ոստիկան է՝

108. Իսհակ իբն Կունդաջիկը (879)։ Նրա մասին այլ աղբյուրներից տեղեկություն չկա։ Ֆասմերն էլ (էջ 100) անորոշ է արտահայտվում նրա մասին, իբն էլ-Աթիրը (է 133) Հիջրի նույն 266 թ. տակ նրան ներկայացնում է միայն

որպես Մուսուլի կառավարիչ և ոչ Արմինիայի։ Աշոտի թագավորական թագ ստանալը խալիֆից, եղել է նրա միջնորդությամբ. ինչպես վկայում է Հովհ. կաթ., էջ 175, Վարդան, էջ 85։

Ե՞րբ սկսվեց Աշոտի թագավորությունը։ Հայ պատմիչները տալիս են 3ԼԴ թվականը (Սամվել Անեցի, էջ 95, Օրբելյան, 175, Ասողիկ, 110, 111, 157), ուրեմն կամ 886 կամ 887։

Բայց այս տեղեկությունը խնդրո առարկա է դառնում, երբ գիտենք, թե Իսա իբն Շայխը այդ թվականին արդեն մահացել էր։ Նրա մահվան թվական տալիս է Հիջրի 268 թ. (մ. թ. 881—882) իբն Խալդունը. իսկ Հիջրի 269 թ. (մ. թ. 882—883) իբն էլ Աթիրը (է, էջ 159) և Հիջրի 270 թ. (մ.թ. 883—884) Տաղրիբերդին (Գ 46)։